լորդ կ'համարիմ շատ անգամ ազգային գրութեանց մէջ կրկնուած ուսման օգուտները մանրամասնաբար յիշել այս առթիւ. միայն հաղորդելով Ձեզ բերկրութեամբ սրտի մեր ժառանգաւորաց դպրոցին վերանորոգութեան այս հաւատիքը, կ'խնդրեմ պատուական Ազգայրատ լրագրի էջերու մէջ տեղ շնորհէք սոյն գրութեանս, և աշակերտաց յաջաջադիմութեան ցուցակին։

Մնամ և պչն։
Ընդրեաս Աբեղիսկոպոս։

ԵՐԵՒԱՆԱՑ ՀԱՅՈՑԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՑՈՒԱԾ ՃԱՌԸ

Բարձրապատիւ Հայր. յարգելի Բաղաքացիք և Ազնուասուն Տիկնայք.

Ձեր ամենիդ դէմքի վրայ տեսնուած զուարթութիւնը, այս ազգային հանդիսից զգացած բերկրանքը՝ յայտնի նշան է որ դուք սիրելի Հայրենակի՛ցք, փոքր՞ի շատէ ճանաչումէք ուսման արժանաւորութիւնը և մանաւանդ իգական սեռի կրթութիւն փրկարար ներգործութիւնը, որ առնումէ Ազգաց և ազանց մէջ։ Բդարև սրանից աւելի մեծ՝ սրանից աւելի քաղցր՝ սրանից աւելի փառաւոր ուրախութիւն չի կարող լինել այն անձանց համար՝ որոնք զգում են և ճանաչում են Ազգի բարոյական և մտաւոր զարգացման արժէքը։

Ազնիւ Հայրենակի՛ցք, դուք հարազատ որդի էք այն երանելի Սուրբ վարդապետին, որ սրանից 1400 տարի յառաջ մեր խեղճ Ազգի գլխին եկած փորձութիւններու վրայ լացած ժամանակը՝ գիտութեան գերազանցութիւնը և տգիտութեան վատթարութիւնը ուղղելով հասկացնել ասումէր, "գիտութիւնն է մայր բարեաց և տգիտութիւնը ծնող չարեաց", և դարձեալ թէ՝ "մոքով կոյր լինելը աչքով կոյր լինելուց վտանգաւոր է, վասնզի կոյրը արեգակն ճառագայթներին է զրկուում, իսկ տգէտը կատարեալ կեանքից"։ Յոյս ունիմ որ դուք այս խօսքերի ճշմարտութեանը քաջ համոզուած էք. դուք կուզէք որ ձեր զաւակները մոքով կոյր չըմնան, կուզէք որ գիտուն բարեկիրթ ու Աստուածապաշտ լինին. մէկ խօսքով կուզէք որ մեր իմաստուն և պարկեշտասուն առաքինաբոյր հինգերորդ դարու հայ կաղանց արժանի թոռներ լինին. որոց բարեմասնութեան վրայ զմայլմամբ խօսումէ քաղցրախօսն Լազարէ. լսեցէ՛ք ինչէ ասում Լուսաւորչի ականաւոր Աբեղեանը թէ մայրական քնքուշ գրկաց մէջ կը հանգչի Ազգաց ոգին. բարքը նախապաշարումը, առաքինութիւնը մէկ խօսքով մարդկութեան բարձր քաղաքակրթութիւնը։. կրկնումէ դարձեալ նոյն հեղինակը թէ։ "Ճշմարիտ վայելչութիւնը այնէ որ մարմնոյ պճնաշարդութիւնից յառաջ հոգին զարդարուի, որովհետև ամենայն բան կատարեալ գործողը հոգինէ"։. սակայն պետք չէ՛ մոռանալ սիրելի հայրենակիցք որ մի ժողովրդեան հոգևոր ու բարոյական կրթութիւնը հետևաբար և ազգութիւնը նախ ի՛ւր կրնքից և լեզուից

կսկսուի, և սոքա որ տեղ կ'սովորուին, ոչ ապաքէն Ազգային նախակրթական դըպրոցներին մէջ և ոչ օտարների մօտ, քանզի եթէ մէկ կլիմայից մի ուրիշ կլիմայ փոխադրուած ծառի պտղոյ համը, հոտը, գոյնը և այլ յատկութիւնքը անփոփոխ չեն կարող մնալ, նոյնպէս և մեր մատաղ զաւակները (օտար ազգաց կրթութեան յանձնելով որպէս կրօնքը նոյնպէս և լեզուն անխարդախ չեն կարող մնալ, ըստ որում այդ դպրոցներն մեզ նման տկար ազգաց հոգին և սիրտը խարդախելու մտօք հիմնուած են, աւելի լաւ է ասել՝ մեր բոլորտիքը իբր որոգայթ լարուած են։)

Ուստի դուք սիրելի հայրենակիցք, յիշեցէք որ յերկնից յատկապէս մեզ պարգևեալ երկու սրբազան աւանդութեանցը այնէ՝ մեր լուսաւորչական սուրբ կրօնին ու պատուական լեզուին հաւատարիմ աւանդապահ լինէք, և այս խորհրդովը բարեմիտ անձինք այս նախակրթական Օրիորդաց դպրոցը բացին և սոցա կրթութեան յարատևութեան ու փառաւորութեան համար հոգ կ'տանին։ Վերջապէս ահա՛ ձեր որդիքը, որք սրանից երկու տարի յառաջ հայկական լեզուի աթութայքն անգամ չգիտէին, իսկ այսօր Ձեզ կ'ներկայանան մեր նախնեաց վսեմ ու Աստուածախօս լեզուն հասկացող մեկնող և մինչև անգամ գրելու կարող, ազգային կրօնքն ու բարոյագիտութիւնը սովորած, Թուաբանութեան աշխարհագրութեան տեղեակ։ Ուսաց լեզուի սկզբանց ծանօթացած ձեռագրծութեան մէջ բաւական յառաջ գնացած վերջապէս իմացական կարողութիւնները փոքրիշատէ մշակուած, սոքա ձեզ ճշմարիտ գովութեան մի առիթ են, իրաւունք է ուրեմն ձեր համակրութիւնը գրաւելու և Ձեր մինչև գարդ ունեցած անտարբերութիւնը մի կողմ ձգելու։

Այսօրս այժմ դէպի ձեզ եմ դարձնում սիրելի ուսանողք, Ազգի դեռափթիթ շառաւիղներ, գիտէք արդեօք ինչ նուիրական պարտաւորութիւնների ներքև կ'գտնուիք, լսեցիք իմացաք արդեօք ինչ բարձր նպատակներ ունին ձեր կրթութեան համար եղած այսչափ ջանքերը, աշխատութիւնները, ծախքերը, խնամքը, դուք մեր թշուառ հայրենիքի ընտանեական կենաց բարեկարգութեան ապագայ յոյսերն ու միխիթարութեան աղբիւրն էք, այս օրուան օրս ձեզի տալիք խրատամարկութիւնները և Ձեր այս օրուան օրս իմացածները շատ քիչ բաներ են ապագային մէջ սովորելիքներիդ հետ բաղդատելով, Ձեր ծնողքը, խնամակալքը, ուսուցիչքը և ողջ մեր հայրենիքը աւելի մեծ և կատարեալ յառաջադիմութիւն կ'սպասեն Ձեզնից. աշխատեցէք ուրեմն նոցա ակնկալութիւնը ի զուր չհանել, Աստուած կ'սպասէ ձեզնից, որ դուք ոչ միայն ձեր միտքը զարդարէք կարևոր և օգտակար ուսմունքներով, այլ մանաւանդ սրտերնիդ էլ մշակէք Աստուածպաշտութեան և առաքինութեան սկզբունքներով, սիրել սորվեցէք ձեր արարիչը, սիրել սորվեցէք ձեր ծնողքը, սիրել ձեր Աստուած, սիրել ձեր ընկերը, սիրել ձեր ազգակից բարեկամները, սիրել և յարգել ձեր մեծերը ձեր հոգևոր հայրերը ձեր հոգևոյն փրկութեան պաշտօնեաները այն է ձեր ուսուցիչները և խնամակալները,

այն այն՝ կ՚ապասէ ձեզնից՝ զգը՝որ դուք կատարեալ հայուհիք և կատարեալ Քրիստոնեայ լինիք. նայեցէք որ այս ակնկալութիւնը լցնէք՝ այն ժամանակը միայն կարող էք ձեր ծնողաց և թէ մեր թշուառ Ազգի միխիթարութեան պարծանք լինել. ձեր վրայ այսչափ խնամքներն ու հոգսերը՝ի զուր չանցնել՝ այն ժամանակը դուք էլ ազգն էլ երջանիկ կ՚լինիք։

Սիրելի ուսանողք՝ ձեր այդ սեփական պարտաւորութիւնից զատ մի ուրիշ գըլխաւոր պարտաւորութիւն էլ ունինք՝ որոնց մենք ամենքս էլ մանակից ենք ազգովին. այս ընդհանուր և անհրաժեշտ պարտաւորութիւններս է երախտագէտ լինել նախ հոգևոր տեսչութիւնից այնէ սիրելի Հայրապետ Տէր Գէորգ Կաթողիկոսից. որոյ հայրական գթառատ խնամքից և պաշտպանութեան տակն է գըտնըւում գպրոցս՝ երկրորդ պարտաւոր ենք շնորհակալ լինել պարկեշտափայլ հոգաբարձուհի տիկնայց ջանացողութիւնից և յատկապէս աղնուաշուք Տիկին Քրիստեան մելիք Ղամալեանից և Տիկին Հոնայ Աղաթեանից՝ որք իւրեանց անխոնջ աշխատութեամբ գրեթէ մոռացած իւրեանց տնական հոգսերը՝ աղգասիրաբար հոգս են տանում դպրոցիս թէ նիւթական և թէ բարոյական յառաջադիմութեան. երրորդ պարտաւոր ենք շնորհակալ լինիլ այն բարեբար անձինքներէն՝ որոց շնորհիւ ուսանում են դպրոցիս աղքատիկ աշակերտուհեաց մեծ մասը՝ և այն պարկեշտասուն տիկիններից՝ որոց անդամակցութեամբը թեթևանում ուսումնարանիս նիւթական ծանրութիւնը՝ չորրորդ պարտաւորենք շնորհակալ լինիլ Հօրեղբայր Ղամալեանից և Պ. Արկրտիչ Արիանարեանից՝ որոնք անձնանուիրաբար ներկայ ամիսից յանձն են առել ձրիաբար դասատուութիւնը թուաբանութեան և Հուսաց լեզուի. վերջապէս շնորհակալութիւն այն ամէն հայերից որոց համար մի քաղաք մոռացման նիւթ է ազգի որդւոց դաստիարակութիւնը և նոցա բարոյական յառաջադիմութիւնը. իսկ այն յարաբերութիւնը որ ես ունեցել եմ իմ սիրելի Հայրենեաց սիրասուն օրիորդաց կրթութեան դաստիարակութեանը մասին՝ է իմ սրբազան պաշտմանս պարտաւորութիւնը. . . առ որ մնամ միշտ պատրաստական ծառայ հայրենեաց և ձեզ անձնանուէր

Նահապետ Եպիսկոպոս
ուսուցիչ և կառավարիչ դպրոցին։

Ի ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅՈՑ ԱՇՏԱՐԱԿ ԳԵՂՋ.

Գերապատիւ Սրբազան Տ՚ր.
Վսեմաշուք Հանդիսականք.

Երբեմն խորին արտմութեամբ պաշարուած լինելով մեզանից շատերի սրբտերը՝ սևադէմ ամպի տակ զետեղուած առանց լուսոյ ճառագայթի անգամ կըմնային։

Բայց արդ երբ ուսման գեղեցիկ ծիրանավայլ լոյսը շողշողելով տարածուեր՝